Նայինք ինչե՛ր գրուած կան...»
— Հոն հրդեհ կայ, ոչ մատեան:

Այդ «հրդեհ» սիրտը զգում է, որ «արշալոյս մը չանցաւ» իր վրայով, մնաց լուռ, «միշտ տրխուր», որովհետեւ «մէկիկ մէկիկ թօթափեցան գլխուս աստղիկք»...

Բաւական չէ իր խորտակուած սիրոյ վէրքը, մեռնում է եւ իր ամենասիրելի ընկեր Վարդան Լութֆեանը թոքախտից եւ Դուրեանի համար այս աշխարհը դառնում է «տաղտուկ», «ցաւերու մեծ մայր» եւ կեանքը կորցնում է նրա աչքում իր արժէքը՝ ներկայանալով իբր «հոգու աղտոտ ձորձ»: Երկու թշուառ ընկերները «ծծեցին գերեզմանի սեւ կաթը» — անյուսութիւնը:

Մեր հոգիք նոճիներու
Թուխ թիթեռներ էին տըրտում,
Սե՛ւ ծըծէինք, սո՛ւգ անհատնում,
Նայէինք միշտ երկրէս հեռու:
Անյուսութի՛ւն, գերեզմանի
Այդ սեւ կաթը շա՛տ ըմպեցինք.
Քեզ յափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից տըժգոյն որդի:

Բանաստեղծը միանգամայն գիտակցում է, որ իր հիւանդութիւնն անբուժելի է, պիտի մեռնի, սակայն, «ա՛յն ատեն ես կը մեռնիմ», ասում է Դուրեանը, երբ «աննշան մընայ երկրի մէկ խորշն հողակոյտն իմ, եւ յիշատակս ալ թառամի»...

Բարեբախտաբար, նրա յիշատակը չի թառամել մինչեւ այսօր, հետեւապէս Դուրեանը հայ գրականութեան համար տակաւին ապրում է եւ «Իմ մահը» հայ ժողովուրդը դարձրել է մի տեսակ թաղման շարական, յուղարկաւորութեան քայլերգ:

Բախտից զրկուած, առողջութիւնը կորցրած, սէրը թաղած, ընկերոջից զրկուած, կեանքի բոլոր դառնութիւնների մրուրը ծծած Դուրեանը պոռթկում է յանկարծ հրաբուխի նման եւ իր սրտում կուտակուած մաղձը «սեւ հեղեղի» պէս դուրս է տալիս «Տրտունջք» բանաստեղծութեան մէջ: Եթէ ճիշդ է, որ մի հատիկ «Մեր Հայրենիք»ով Միքայէլ Նալբանդեանը, «Արաքսի Արտասուքով» Գամառ-Քաթիպան նորէն անմահ կը լինէին հայ գրականութեան մէջ, ապա եւս առաւել անմահ է Դուրեանը հէնց սոսկ իր «Տրտունջք»ով, որ մի արտակարգ թափով ու խորութեամբ է գըրուած:

Մահը եւ կեանքը, ապրելու բուռն ցանկութիւնը եւ խորտակուած յոյսերը միշտ պայքար են մղում: Սա մի յաւիտենական առեղծըւած է, կնճռոտ խնդիր, որի մասին շատերն են մտորել եւ գրել. հէնց այդ «անլուծուած» հարցի խտացումն է Դուրեանի «Տրտունջք»ը...

Բանաստեղծը տեսնելով որ ինքը շուտով անարդարութեան զոհը պիտի դառնայ՝ չունենալով առողջութիւն, բարւոք վիճակ, սէր եւ երջանկութիւն, հրաժեշտ է տալիս Աստըծուն, եւ կեանքի խորհրդանշան արեւին:

Է՛, մընաք բարով, Աստուած եւ արեւ՝
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերեւ...

Այնուհետեւ դիցաբանական ձեւով է ներկայացնում իր մահը, որ ինքն էլ մի աստղ է, գնալու է երկինք.— «Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ ամբիծ եւ թըշուառ հոգւոց անէծք ողբագին, որք թըռին այրել ճակատն երկնքին. այլ այն Աստուծոյն՝ չանթերո՛ւ արմատ՝ յաւելուն զէնքերն ու զարդերն հըրատ»...

Այնուհետեւ, կարծես զգալով իր յանդըգնութիւնը եւ ոչնչութիւնն որպէս մահկանացու, անմիջապէս աւելացնում է՝

Այլ, ո՛հ, ի՛նչ կ'ըսեմ... շանթահարէ՛ զիս,
Աստուա՛ծ, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնքի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի՛...

Նա ողջունում է Աստծուն, այդ «դողդոջ էակին», որ խլել է նրա «ճակտի վարդն» ու աչքերի կրակը, «հոգու թռիչքն» ու «շրթունքների թրթռումը» եւ դրանց փոխարէն տուել է պատանու «աչքերին ամպ», «սրտին հեւք»: Խեղճ բանաստեղծը հաւատացած է, թէ «այդ գերագոյն «դողդոջ էակը» գոնէ նրան պիտի ժպտայ մահուան վայրկեանին, պահելով նրա համար մի հանդերձեալ կեանք: — «Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի, կեանք մ'անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի»:

Այսպիսի հանդերձեալ կեանքի հեռանկարով նա մի առժամանակ հաշտուած է մահուան հետ, բայց յետոյ զարթնում է նրա մէջ կասկածը եւ նա ցանկանում է վերջ տալ այդ «ոխերիմ» Աստծուն: Մի անօրինակ յեղափոխա-